

ՀԱՆԴԵՍ

Պ. Ի Տ Ա Կ Ա Ն

Հ Ն Չ Ո Ղ Մ Ե Ք Ե Ն Ա Թ Ք




ԵՐԿԱՅ գարուս մեքենականութեան զարգացման ոգին կը տարածէ իւր օգտաւէտ և արգասաբեր շնորհը ամենայն իրաց վրայ, կատարելացործելով զայն և կամ դիւրացը ներով առնպատակն հասնելու միջոցներն ։ Գկայ արուեստ մը և կամ գիտութիւն մը, բաց ի գեղեցիկ դպրութեանց, որ այս ոգւոյն զարթնէն յետոյ, մասցած լինի իւր նախնական զալափարաց մէջ, մինչդեռ եղան նաև գիտութիւններ որ եթէ չըսենք բոլորովին հիմնեցան, սակայն այնպէս զարգացան և փոխուեցան, որ կրնանք նորագիւտ գիտութեանց արգան գարգն գասել, ի մէջ այց է նաև երկրագործութիւնն ։

Կը յիշեն արդէն յարգու ընթերցողք որ ստէպ ստէպ այլ և այլ անդամ տեղի ունեցան թագավաճէպ Հանդիսին մէջ այլ և այլ յօդուածոց գրութիւնք սոյն գիտութեանս (Երկրագործութեան) նկատմամբ, և ուր ջանացեր ենք նաև յառաւել գիւրըմբռնուումն ընթերցողաց ընծայել նաև անոնց պատկերն ։ Արդէն իսկ խօսած լինելով ուրիշ առթիւ Զէրէզա արօրագիր գործոյն վրայ (Բազմ. 1884. էջ 581) կուզեմք հիմա ներկայացնել ընթերցողաց զմուտ հնձող մեքենայն իրենց այժմեան կատարելացործութեան մէջ ։

Հնձող կը կոչուին այն մեքենայք՝ որոց նպատակն է հատանել զիւրաւ առանց ձեռաց աշխատութեան արօտի բոյսերն ։ Այս գործեաց նախնական փորձերն ժամանակակից են գրեթէ արմուեաց մեքենական հնձողին հետո Յետ միանգամ գտնելու այս յետին, փորձ փորձեցին զնյն գործածել նաև ճարակի բոււտոց համար. սակայն իմացան առժամայն որ այս երկու գործողութիւններս որչափ և մերձ կ'երենին իրերաց, նոյնքան ևս կը առընթիւն իրարմէ. որով եթէ չըսենք անկարելի, բայց յոյժ գժուարին կը լինի միուն զիւրան ևս կատարել. Ռւսադի սահիպուեցան ուրիշ միջոցներու գիմել, զոր և ի գլուխ հանին ամենայն յաջողութեամբ ։

Այս գիւտիս, ինչպէս նաև ուրիշ բազմաթիւ գիւտերու պատին՝ պէտք է գարձեալ ամերիկացոց բնեղուն և հանճարաւոր գործունէութեան ընծայել. Վուտ ամերիկացին եղաւ նախ որ այս զալատնեաց լուծումը մեր առջնը պարզեց, և այն ամենայն հնձող մեքենայք որ մինչև ցարդ հնարեցան, ամէնն ալ հիմնեալ են նոյն նախագաղափարին վրայ, և հաստատուն կը պահն հիմնական մասունքն, որ է՝ աղոցանման հատիչ գործի մը հաստատեալ

առ ի շեղ երկրիս մակերևութիւն մօտ՝ որչափ և կարելի է, այնպէս որ ոչ սղոցին ատամննքն խցուին ՚ի բուաց, և ոչ իսկ գետնի քսուին Այս սղոցը կը շարժի ոչ եթէ առանձին իրեն համար յատուկ շարժիչ զօրութենէ մրտ, այլ նոյն իսկ մերենային յառաջ ընթանալն է որ զայն կը շարժէ: Եւ յիրաւի, ամենայն հնձող գործի կը բաղկանայ կազմածէ մի, հաստատեալ երկու անուոց մէջ, որոց արամագիծն է ընդհանրապէս 70.-75 հարիւրորդամեղր, այս անուոց արտաքին երեսաց վրայ կան ի գուրս ցցուեալ տակոսածն շերտք երկաթի, որոց պաշտօնն է չթողուլ սահել անուոց երկրիս երեսին վրայ: Իսկ կազմածն, որ ի սկզբան ի փայտէ եր' իսկ այմայ յերկաթոյ, հաստատեալ է երկու անիները միացնող առանցից ծողին վրայ, սակայն այնպէս որ առանցից՝ անիւներուն հետ գտնալուն արգելք չինի: Դարձեալ երկու անուոց ներքին կողմն հաստատեալ են երկու ուրիշ անիւներ, որոց ներքին կողմն ատամնաւոր է, և տրամագիծն փոքր է քան արտաքին անուոց արամագիծը, ինչպէս կը տեսնուի ՚ի ջնն 2: Այս փոքր անիւք համակեցուն են մեծ անուոց և կը շարժին անոնց հետ ի միասին:




Ձև 4. Բացատրութիւն մերենական դրուրեան խոր հնձողի մը:

Դարձեալ իւրաքանչիւր այս ատամնաւոր անուոց Ա (զոր առանձին կը ներկայացընենք Ձև 1) հետ հաղորդուած են մի մի փոքրագոյն անիւներ (անընչափի ջեռոյն մէջ) որք կը հողովին իրենց առանցից վրայ: արդ այս առանցքին միջակէտը հաստատեալ է ուրիշ մեծ անիւ մը կ ուղղահայեաց նոյն առանցքին, և որոց անկիւնական ատամննքն հաղորդուած են ուրիշ փոքր հորիզոնական զրիւք դրուած ՚ի անուոց մը անկիւնական ատամանց, որք երկուքը միասեղ միացած կը ճնացցնեն ուղիւն մը: Արդ այս յետին փոքրագոյն անուոյն (՚ի) առանցքին ճողին ստորին ծայրը հաստատուած ած կայ պղտիկ թռչարան (volant) անիւ մը ՚ի. և այս թռչարանին վրայ ագուցուած, բայց ոչ ՚ի կեղրանի, շարժարուն մը, որոյ միւս ծայրը հաստատեալ է Զ նվազին գլխոյն վրայ: Այս այսպէս լինելով, զի՞րին է ըմբռնել թէ ինչպէս հողավական շարժումը կը փոխակերպի ՚ի զուգահեռական յառաջ և ետ երթարու շտրժման, որ անհրաժեշտ է սղոցին համար, և առանց որոյ չկրնար հատանել գաշտաց խոտերը:

Սակայն հարկ չկայ ամեննեին որ երկու մեծագոյն ատամնաւոր անիւներն են միանգամայն ներգործեն ՚ի շարժումն, այլ բաւական է նոյն իսկ մին, ինչպէս սր յաճախ կը պատահի, որով փոխանուկ կեցընելու զգործին, միովն յառաջ կը վարեն զայխատութիւնը. այլ երբ երկու անուոց ատամննքն են

խոտերով գոցուած լինին, նոյն ժամանակ հարկ է կեցընել աշխատութիւնը զանոնք մարդելու համար: Ուստի այս ձանձրութիւնը և մարդելու աշխատութիւնը վերջացնելու համար մոռածեցին ոմանք վերցնել մեծ անուոց քով հղած ատամնաւոր անիւրը և գնել ուրիշ մը անմիջապէս այս երկու անուոց առանցից ձողին միջակտը. և զայն փակել մետաղաշէն տփով մը ի պաշտպանութիւն ընդգէմ տղմի և խոտոց ըստ այսմոնց շինուած է երկածի Ալպարէ մեքենայն:

Իսկ սղոցը որ էականագոյն մասն է նպարծւոյն, քառակուսի երկաթեայ ձողէ մը բաղկացած է, որոյ վրայ յարմարցուցած են պտուտակիօք եռանկիւնածե. հաւասարակող պողովատեայ ատամնենք, որոց գագաթունքը կամաւ բթացուցած են, իսկ կողերը երկասյրի հատու են: Ալզոցին բռակուսի թիթեղին սկզբնածայրը կայ օղակ մը, որոյ մէջ կը մոնէ բռնատեղուոյն կարթը: Ալզոց կը հանգչի բովանդակ երկայնութեամբը երկաթեայ հաստա-



Ձև 2. Հենող գործի Օսպրբն ամերիկացայ, միաձի:

տուն և թանձր ձողոց մը վրայ որ կը կոչուի պահպանակ (garde), և որոյ ի ծայրից մին՝ հազորգուած է անուոց վրայ եղած կազմածին՝ երկաթեայ տափակ ձողով մը: Այս պահպանակին երկու ծայրերն ես հանգչած են երկու փորր անուոց և կամ անուակալաց վրայ, յորոց մին՝ այն որ կը գտնուի մերինային կողմը իւր կեդրոնէն միացած է երկաթեայ ձողով մը մերենասյին ամբողջ թեանզ, հետ, բայց այնպէս որ կարենայ ամենայն ուղղոթեամբ գտանզ, ուստի ծինուոյ վրայ հաստատուած է: Պահպանակին մին ծայրի անուակալն ես հաստատուած է իւր կեդրոնին վրայ, նմանապէս ծինիրով սղոցին մէկալ ծայրը: Այս անուակալին բովէն անմիջապէս վեր կը բարձրանայ գագաթնահայեաց դիրով քառակուսի անոնցմէն ծող մը, որոյ պաշտօն է բաժնել հնձեալ մասը անոնցմէ որ գեռ չեն հնձուած: Դարձեալ սղոցին պահպանակը զինեալ է զէպ յառաջ սուր ատամնածե. ծայրերով, որը շենուած են կռանելի երկաթով և գատարկ ի ներքուատ՝ ազտա անցր չնորհելու համար սղոցին, սակայն իւրաքանչիւր ատամնան ծայրը ագուցած է պողովատեայ ծայր մը, որպէս զի կարենայ զիմնանալ ընդ երկայն ընդգէմ ամենայն հարուստոց որ կրնայ հանդիպիլ հնձելու ժամանակ: Այս պահպանակին ստորին երեսը կռնածե շինուած է, ծայրից գետին չխորուելու:

պատճառաւ, և միանգամայն քիչ մը դէպ ի խոնարհ հակեալ են, որով կարենայ սղոցն ըստ կարելոյն խորէն կտրել հունձքը: Ասոնց զլիաւոր նպատակն է ամփոփելով հունձքը ժողովնի մի, և յետոյ սղոցին հետ ձևացը ներով մկրտածմի հատանել խորձը արագութեամբ, և դարձեալ շթողով զքարինս և ուրիշ հաստատուն և պինդ մարմինները զարնուիլ սղոցին ատամանց և անափուան ընել զայն, որով և ժամավաճառ շինի գործաւորն ստէպ ստէպ նորոգել և սրել զողոց:

Ի դիւրութիւն ուղղըշին որպէս զի ստէպ ստէպ հարկ շինի յերկիր ինենի ի կառաց, սղոցին վերին ծայրը օղակի մը մէջ անցուցած են երկայն կոթ մը, որուն միջոցով կրնայ բառ կամ կառավարել զալոցը, յառաջ կամ ետ տանել, վեր բարձրացընել և կամ վար իջեցընել, և կամ բոլորովին գագութնսհակայցարար վեր բարձրացընել, որպէս զի արգելու շինի ճանապարհաց մէջ կառքին ընթացից: Խսկ իւր նստարանն ինչպէս որ կը տեսնուի ի փորագրութեան, շինուած է անմիջապէս երկու մեծ անուոց առանցից միջակէտը, ուստի ամենայն դիւրութեամբ կրնայ թէ զինդանին իտավարել, թէ զալոցը և թէ ճանապարհաց մէջ երթալու ժամանակ մերենական միջոցով մը արգիլու որ ատամաւոր անիւները չգառնան յանօգուտս, որով և կարող վնին տեեցւ երկայն ժամանակ:

Բոյոր այս գործողութիւններն թէպէս և արտաքուստ խիստ պարզ երեւան, սակայն իրականապէս շատ խճողեալ են: Որպէս զի սղոցը կարենայ գործել իրեն պահանջած արագութեամբը, պէտք է որ գործուոյն ամենայն մասունքը լինին ամրապինդ և ճիշտ, պառուտակը աղէկ հաստատուն ամբացուցած և միշտ ուշադիր ճարպոտելու շման ենթակայ տեղերը. և մէկը որ այս ամէն բաները ընէ, լաւ կը հասկնայ թէ այնչափ դիւրին չէ որչափ որ կը կարծուի, ուստի և պէտք է մեծ խնամոց և ուշադրութեան գործածութեան միջոց, մանաւանդ շինուութեան ժամանակ:

Երբեմն կը պատահի որ անուոց անհաւասար երագութեան պատճառաւ պղտիկ անուոց առանցից ձողերը կը գալարին սաստիկ բռնութենէն ուստի այս անպատճէութեան առանց համուր յարմարցուցին լեզուակաւոր անիւներ (pigion-le a crochet) որոնք կրնան աղատաբար հակառակ կողմն դառնալ առանց վնասելու առանցից, լեզուակը կը ծառայէ միայն երբ գործին դէպ յառաջ կը շարժի, իսկ երբ ետ կը գառնայ, զսպանակը որ կը մնչէր զեզուակը ընդգէմ անուոյն առամանց կը թունայ և լեզուակը կը սահի անուոց ատամանց վրայ: Այն լահկը և կամ երկայն մեղեխը, որով գործաւորը զալոցը իւր նստած տեղէն կը կառավարէ՝ այն ևս ունի իւր ծայրը լեզուակ մի զոր հաստատուն բարձրութեան մը մէջ կը բռնէ ճանկով: Հուսկ ուրեմն այն ամենայն մասերը ուր սաստիկ է շիտումն, վրանին դրուած է ճարպոյ համար տուփ մի, զոր ուշադիր լինելու է միշտ լի պահէլ: Զմերենայս ճարպոտելը, աննաց կանոնաւոր ընթացից և երկայն ակնողութեան մի միակ միջոցն է: Սակայն լաւագոյն և ապահովագոյն է միշտ ունենալ, եթէ ոչ ամէն կտորները, գէթ կարեւորագոյն մասերը քանի մը զայգ, որով գժրախտութեան մը միջոց, կարելի լինի շուտով գարմանն մաստոցանել. և առ այս ի դիւրութիւն մեքենային իւրաքանչիւր մասունքն թուանշակեալ են:

Որպէս զի լաւ և դիւրաւ աշխատութիւնն յառաջ վարի, պէտք է սղոցն միշտ աղէկ սրեալ և հասու գործածել, ուստի յետ երկու ժամ անընդհատ աշխատութեան, պէտք է փոխել զայն և զնել ուրիշ մը, և միանգամայն մաքրել և սրբել ատամանց վրայ թանձրացած ճարպը, նմանապէս


նաև սղոցին տակը և զած ատամնաձեխն վրայ հաւաքուած խոտերը և աղ-
տեղութիւնները: Ուստի ամենայն հնձող մեքենայի հարկաւոր է գէթ առ-
նուազն ունենալ երկու սղոց փոխանակաւ գործածելու համար: Խսկ սղոց-
ներու սրելը կը կատարուին կամ՝ խարտոցով և կամ՝ յիսանաբարի վրայ:

Հնձող մեքենայից աշխատութեան չափը իրենց այժմեան յառաջադիմու-
թեան գրից մէջ նկատելով կը կախուի առաւելապէս զայն վարողին փոր-
ձառութենէն և գործունէութենէն, ուստի կարեսոր է անոր որ այս աշխա-
տութիւնն յանձն առնու կատարիլ ունենալ ևս քիչ մը յաջողակութիւն
ձեռաց և ճարպկութիւն, զոր և կրնայ մէկն ստանալ քիչ ժամանակի մէջ
մեծ ջանքով եթէ այխատելու լինի: Ուսանելու գլխաւոր և էտական մասն է՝
ճանանալ երկրի հանգամանքը և բուսոց կտրելու կերպը երբ խոտելը ի
վայր հակիալ են՝ պէտք է այնպէս կանոնութել զմեքենայն, որ թէ բար-
ձրացընէ զանոնք ի ինքնին ժամանակի կորէ ևս: Սովորաբար երբ խոտոց
անումն չէ այնչափ խիտ, զգործին զաշտին մէջ բոլորածն կը շրջեցնեն,
այլ երբ ընդհակառակն է, նոյն ժամանակ լաւագոյն է քալել ուղղակի ընդ
բովանդակ երկայնսաթիւն դաշտին: Թէպէտ և այս կերպովն իւրաքանչիւր
զարծուածքի միջոց ժամանակի կորուստ մի կը լինի, սակայն զայն կը շահինք
աշխատութեան կանոնաւոր կերպով յառաջնելովն: Խսկ հատեալ խոտը կը
մնայ իւր բնական տեղն հորիզոնական դրիքը մեքենային ընթացից ուղղու-
թեան. իսկ անոնք որ սղոցին ծայրը եղած արգելչին (separateur) ներքե-
կուգան, կը կարուին և կը ձգուին յերկիր առ ի շեղ Եւ այս խաշանման
գործիւնն փորձով յայտնուած է որ խիստ օգտակար է, և բուսոց արագ
չորնալուն գլխաւոր պատճառն:

Հիմակուան ժամանակի հնձող մեքենայից շինութեան կերպը օր քան զօր
կը յառաջադիմէ ի կատարելութիւն, ուստի և կան ի գործածութեան զա-
նազան մեքենաներ, գաղթափարեալ սակայն նախնական օրինակին վրայ.
գլխաւոր հէտք յորում կը տարբերին ի միմեանց է սղոցին տեղը. ումանց
և մանաւանդ թէ բազմաց մէջ սղոցը դրուած է մեծ անուոյ առաջակողմն,
և ումանց մէջ ընդհակառակն յետակողմն: Ի մէջ այնքան տեսակաց որ կը
գտնուին, հարկ է գէթ յիշատակել զանոնք որոց գործածութիւնն աւելի
յանախնալ է, և կը կոչուին իւրաքանչիրն ճարտարաց անուամըն որ զանոնք
հնարեցին, ինչպէս են անդդիմականքն և ամերիկեանքն Վուտ, Սապըրն, Ճուհ-
թըն, Հօրսպի, Սամուէլսըն, և գաղթականքն Ալպարէ, Կիւմիթ և ուգիէն,
Այս մեքենաններէն շատերը յարմարեալ են երկու ծից համար ինչպէս
է Ալպարէին, որոյ պատկերն կը ներկայացնենք հոս (Ձկ 5), և են նաև
ումանք որոց կը լծին մէկ ձի միայն, ինչպէս է Սապըրն ամերիկացոյն, և
յիտինք յայտնի է որ շատ աւելի թէթե և զիւրատար պէտք են լինել քան
զառաջինն: Յօրինուեցածն նաև մօտ ժամանակներս հնձողներ եղանց հո-
մար, յորս ատամնաց թիւը այնպէս շինուած է որ եղան գանդաղ քայլին
անպատեհութեան առաջն առնու, որով և գործն յառաջ կ'երթայ, ինչպէս
թէ ձի լինէր:

Արդ այսափ ըսելէն յետոյ մեքենայից կազմութեսն վրայ, հարկ է նաև
քանի մը խօսր ըսել թէ յորում կը կայսանայ իւր կատարելագործութիւնն, և
կամ թէ ըսենը ինչ առաւելութիւն ունի գերազեաց վրայ, զոր կը գործածն
աղքատ և միջակ կալրւածանեարք: Համարելով արդ որ մեքենային ընթա-
ցից երագութիւնն լինի առ իւրաքանչիր մաներկորդ 1⁵, 20, և սղոցին եր-
կայինը 1⁷, 25, տեսականապէս նկատելով պէտք է որ մեքենայն մի ժամուան
մէջ կարէ երկիր մը որոյ տարածութիւնն լինի ծէ կալ: Սակայն չատ

արտաքին և ներքին պատճառաց համար, իւր այս երագութիւնն անհնար կը լինի յարդինս ածնլու, ինչպէս են քաղելու բուսոց խիտ և կամ ցանցառ մինեն, երկրի անհարժութիւնքը, հողին խոնաւութիւնը կամ չորութիւնը, բուսոց տեսակը, այս ամէնը միատեղ առած մեծ ազդեցութիւն ունին



Ձև 5. Աղասիկ, հնագույն մերձական երկանքի:

գործողութեան վրայ, որով և աշխատանաց չափը և ժամանակը ըստ պարագայից և պայմանաց կը փոխուի, ուստի և անհնար է ստոյգ ժամանակ մը որոշել Այլ փորձով յայտնի է որ մեքենայ մի՝ յօրում՝ լծուած լինի լաւ և ուժեղ ձի մը, կրնայ օրուան մը մէջ կարել 350 կալէն մինչև 400 կալ, և կամ վերածենով ի մեզրական չափս 2000 մեդր քառակուսի երկիր մը,

Խակ իւր արդինքը և խնայողաւթիւնքը հաշուելով զել և զմուտ ունի 100 կալ հողայ մը վրայ 7 ֆուանք չահ, զոր բաժնելով 100 ի վրայ, կունենանք գրեթէ 14 հարիւրեակ առ մէն մի կալ:

Բայց ի ձրից երազութեան և խնայութեան, ունին մերենապք ուրիշ առաւ, և լութեան մի ես, որ վերագասել կու տայ մեղ իւր գործածութիւնն քան զգերանդիս, և է այս ինչպէս նախնարար յիշատակիցինք իւր ամենամեծ ճշութիւնն և կանոնաւորութիւնն որով կը կտրէ զիտակիր, և որոյ օգուտը աւելի բացայաց կը տեսնափ երկրորդ և երրորդ հնձման ժամանակ, Խսկ իսոզանն որ կը գտնուի շատ անգամ աճած բու սոց մէջ և որոյ վրայէն կը սահի գերանդին տռանց կտրելու, ընոհակառակն նեցուկ և յենարան կը լինի մերենային սպոցին, որոյ վրայ յեցած կը կտրէ սպոցը այն բարակ և փափուկ խոռոչը որ կը բու սնին առատարար ուրիշ բարձրագոյն բուսոց արմատոց բոլորտիքը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐԱԼՈՒՐՔ



Մարդուս մարմնոյն տարրաբանական բաղադրութիւնը. — Անցաւանները անդղիական լրագրաց միջն մէջ հաստարակուած էր, թէ 70 հազարագրամ կշռող մարզու մը տարրաբանական բաղադրութիւնն, եղած զանազան հաջուց համեմատ՝ հետևեալն է.

Մարդուս մարմնոյն մէջ 13 տարերը կը գտնուին, յորոց հինգն իւղային են և ութ հաստատուն: Յառաջ քան զամենայն, մարդս կազմուած է թթուածնէ: որ յետին աստիճանի ճնշեալ վիճակ մ'ունի. վասնդի մեր մարմինը 44 հազարագրամ թթուածին կը բովանդակէ, որոյ քանակն ի սովորական բարեխսառնութեան՝ 30 մէդր խորանարդքառակուածին՝ անցնի: Ձրածինն, որ նուազէ խոռութեամբ, մարդուս մարմնոյն բաղադրութեան մէջ 7 հազարագրամ կը գտնուի. սակայն այս կշռոս յազատ վիճակի՝ 80 մէդր խորանարդքառակուածի կ'ըլլայ: Տասուերկու մարդկանց ջրածնաւ 1000 մէդր քառակուսի ընդունակութիւն ունեցող օդապարիկ մը կրնայ լցնուիլ որ երեք կամ չորս հոգի կրնայ բարձրացունել: Դարձեալ մարդուս մարմնոյն մէջ 1 հազարագրամ և 72 հազարագրամ բորակածին կը գտնուի, 800 գրամ ըլլր և 100 գրամ ծորին:

Մարդուս մարմնոյն մէջ հաստատուն մարմիններէն առաջին ածուխն է՝ որ 22 հազարագրամ կը գտնուի, 800 գրամ լուսածին, և 100 գրամ ծումբ:

Մարդուս մարմինն ամեննեին թանկագին մետաղ մի չբովանդակեր, այլ 1,750 գրամ կրածին, 80 գրամ կալիոն, 70 գրամ նատրուս, 50 գրամ մագնես, և 50 գրամ երկաթ:

Այս զանազան տարերքս անթիւ կերպով իրարու հետ միացած են, և այնշափ անհամար բաղադրութիւնք կը կազմեն, զոր թէ մէկն ուզէ